



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 08 » փետրվարի 2021թ. 08-ը  
ք. Երևան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 16-ի N 1211- Ա որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը և ՀՀ Էկոնոմիկայի նախարարի N 982-Ա առ 07.08.2020թ. հրամանը՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությանը «Անվավոր փոխադրամիջոցների և անվավոր փոխադրամիջոցների վրա տեղադրվող և (կամ) օգտագործվող սարքավորումների ու մասերի համար միօրինակ տեխնիկական կարգադրագրերի ընդունման մասին և այդ կարգադրագրերի հիման վրա տրվող հաստատումների փոխադարձաբար ճանաչման պայմանների մասին» համաձայնագրով նախատեսված տեսակի հաստատման տրամադրման համար, «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներն իրականացնելու նպատակով տրանսպորտային միջոցի տիպի հավանության (ամրաշրջանակի (շաստի) տիպի հավանության) փաստաթղթերի հաստատման, գրանցման, համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ձևանմուշների տպագրման ու համապատասխանության գնահատման մարմիններին տրամադրման, համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ռեեստրի վարման գործընթացների ապահովման նպատակով լիազոր մարմին ճանաչելու մասին» և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության Կանոնադրությունով վերապահված լիազորությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Տրանսպորտային միջոցների համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ռեեստր մուտքագրելիս, համապատասխանության գնահատման մարմնի և (կամ) փորձարկման լաբորատորիայի նույնականացման համարը նշել «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ կողմից տվյալ կազմակերպությանը տրված հավատարմագրման վկայագրի գրանցման համարը:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

ժամանակավոր պաշտոնակատար՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ